1757

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎՐ. Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1938

324
Է-99

15 JAN 2010
26 SEP 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

324
Լ-99
կր

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎՐ. Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1938

12 AUG 2013
6856
17751

„ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ“ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Է·

Հաստատել «Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունը»:

Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Ֆ· ՄԱԽԱՐԱԶԵ

Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի պաշտոնակատար՝ Վ· ԲՈՒՋԻԱՇՎԻԼԻ

26 *փետրվարի*
1938 *թ· ք· Թբիլիսի*

ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա.Ա. Մեհանդի
Ս. Մասունիանի անվ.
5253
38

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳԼՈՒԽ I.

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1·—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 147-րդ հոդվածի հիման վրա Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրություններն ընտրողների կողմից կատարվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 2·—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրություններն ընդհանուր են·—Վրացական ԽՍՀ բոլոր քաղաքացիները, որոնք հասել են 18 տարվան, անկախ ռասայական ու ազգային պատկանելիությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի մեջ, բացառությամբ խելագարների և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքների զրկումով:

ՀՈԴՎԱԾ 3·—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները հավասար են·—յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն· բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 4.—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 150-րդ հոդվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 5.—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 151-րդ հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 6.—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական ոկրուգների:

ԳԼՈՒԽ II.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7.—Ընտրողների ցուցակները կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդի կողմից, իսկ ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ ռայոնական Խորհրդի կողմից. գյուղական վայրերում և հեներում աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 8.—Ընտողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների որը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, վորոնք ունեն ընտրական իրավունք և ցուցակները կազմելու մոմենտին բնակվում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Խորհրդի տերրիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 9.—Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում այն անձերը, վորոնք դատական վճռով ընտրական իրավունքներից զրկված են՝ ընտրական իրավունքներից զրկելու վերաբերյալ դատավճռի մեջ սահմանված ամբողջ ժամանակամիջոցում, ինչպես նաև այն անձերը, վորոնք որենքով սահմանված կարգով ճանաչված են խելագար:

ՀՈԴՎԱԾ 10.—Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի, այբբենական կարգով, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքն ու բնակության վայրը, և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների Խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից:

ՀՈԴՎԱԾ 11.—Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել մեկից ավելի ընտրական ցուցակի մեջ:

ՀՈԴՎԱԾ 12.—Այն ընտրողների ցուցակները, վորոնք գտնվում են զինվորական մասերում և զորական միավորումներում, կազմվում են հրամանատարության կողմից, հրամանատարի և զինվորական կոմիսարի ստորագրություններով: Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ըստ բնակության վայրի՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 13.—Հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին և այլ բուժական հիմնարկություններին կից ստեղծված ընտրական տեղամասերի ընտրողների ցուցակները կազմվում են, ինչպես հիվանդ քաղաքացիների, այնպես էլ ընտրության որը որապահություն անող բժշկական անձնակազմի նկատմամբ:

Ընտրություններին չեն կարող մասնակցել այն հիվանդները, վորոնք գտնվում են քութեչային և դիֆտերիտային բաժանմունքներում:

ՀՈԴՎԱԾ 14.—Ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների պատգամավորների Խորհուրդը կախում է ընտրողների ցուցակները՝ ընդհանուրի դիտության համար, կամ ընտրողների համար հնարավորություն է ապահովում այդ ցուցակներին ծանոթանալու Խորհրդի շենքում:

ՀՈԴՎԱԾ 15.—Ընտրողների ցուցակների բնագիրը պահվում է համապատասխանորեն՝ աշխատավորների պատգամավորների Խորհրդում և զինվորական մասում կամ զորական միավորման մեջ:

ՀՈԴՎԱԾ 16.—Այն դեպքում, յերբ ընտրողն ընտրողների ցուցակի հրապարակման և ընտրությունների որվա միջև ընկած ժամանակամիջոցում փոխում է իր բնակության վայրը, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը նրան տալիս է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ձևի «քվեարկության իրավունքի վկայական» յեվ ընտրողների ցուցակի մեջ նշում է—«մեկնեց». նոր բնակավայրում—մշտական կամ ժամանակավոր—ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակի մեջ, ներկայացնելով անձնական վկայական, ինչպես նաև «քվեարկության իրավունքի վկայական»:

ՀՈԴՎԱԾ 17.—Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ (ցուցակների մեջ չմտցնելը, ցուցակներից հանելը, ազգանվան, անվան, հայրանվան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկված անձերի սխալ կերպով ցուցակների մեջ մտցնելը) հայտարարությունը տրվում է աշխատավորների պատգամավորների այն Խորհրդին, որը հրապարակել է ցուցակները:

ՀՈԴՎԱԾ 18.—Աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է յերեք որվա ընթացքում քննության առնել ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու մասին տրված յուրաքանչյուր հայտարարություն:

ՀՈԴՎԱԾ 19.—Ընտրողների ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ հայտարարությունը քննարկելուց հետո, աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակի մեջ, կամ հայտարարություն տվողին գրավոր տեղեկանք տալ նրա հայտարարությունը մերժելու մոտիվների մասին. աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում հայտարարություն տվողը կարող է բողոք ներկայացնել ժողովրդական դատարանին:

ՀՈԴՎԱԾ 20.—Ժողովրդական դատարանը պարտավոր է յերեք որվա ընթացքում դատական դռնբաց նիստում, հայտարարություն տվողի և Խորհրդի ներկայացուցչի ներկայությամբ, քննության առնել ցուցակի մեջ անճշտություն լինելու վերաբերյալ բողոքը և իր վճիռն անհապաղ հայտնել, ինչպես հայտարարություն տվողին, այնպես և Խորհրդին: Ժողովրդական դատարանի վճիռը վերջնական է:

ԳԼՈՒԽ III.

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԳՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 21.—Վրացական ԽՍՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի հիման վրա Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում է Վրացական ԽՍՀ քաղաքացիների կողմից, ըստ ընտրական ոկրուգների:

ՀՈԴՎԱԾ 22.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգը կազմվում է 15.000 բնակիչ՝ յուրաքանչյուր ոկրուգին սկզբունքով: Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգ ուղարկում է մեկ պատգամավոր:

ՀՈԴՎԱԾ 23.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները կազմվում են Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից:

ՀՈԴՎԱԾ 24.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների ցուցակը հրապարակվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, ընտրությունների որը նշանակելու հետ միաժամանակ:

ԳԼՈՒԽ IV.

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25.—Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգների մեջ մտնող քաղաքների ու ռայոնների տերրիտորիան բաժանվում է ընտրական տեղամասերի:

ՀՈԴՎԱԾ 26.—Ընտրական տեղամասերը կազմվում են քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, ռայոնական բաժանում ունեցող քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների ռայոնական Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 27.—Ընտրական տեղամասերը կազմվում են վոչ ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 28.—Յերկու հազարից վոչ ավելի բնակիչ ունեցող գյուղխորհրդի տերրիտորիան կազմում է, իրրև կանոն, մեկ ընտրական տեղամաս. յուրաքանչյուր շենում, գյուղում, վորոնք ունեն 500-ից մինչև վոչ ավելի քան 2.000 բնակիչ, կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս:

500-ից քիչ, բայց 300-ից վոչ պակաս բնակիչ ունեցող գյուղերում ու գյուղամբերում, յեթե այդպիսի գյուղերի հեռավո-

բությունն ընտրական կենտրոնից 10 կիլոմետրից ավելի չ, կարող են կազմվել առանձին ընտրական տեղամասեր։

ՀՈԴՎԱԾ 29։—Հեռավոր շրջաններում, որտեղ դերակշռում են մանր բնակավայրերը, թույլատրվում է կազմակերպել ընտրական տեղամաս առնվազն 100 հոգի բնակչությամբ։

Լեռնային և քոչվորական շրջանների համար, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության թույլտվությամբ, թույլ է տրվում կազմել ընտրական տեղամասեր 100–ից քիչ, բայց 50–ից վոչ պակաս բնակչությամբ։

ՀՈԴՎԱԾ 30։—Այն քաղաքները, բանվորական շենները, ինչպես նաև գյուղերն ու գյուղխորհրդի տերրիտորիան, որոնք ունեն 2·000 բնակչից ավելի, ընտրական տեղամասերի բաժանվում են այս հաշվով՝ մեկ ընտրական տեղամաս 1500—2500 բնակչին։

ՀՈԴՎԱԾ 31։—Զորամասերը և զորական միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր 50–ից վոչ պակաս և 1·500–ից վոչ ավելի ընտրողների թվով, որոնք մտնում են ընտրական ոկրուգը զորամասի կամ զորական միավորման վայրում։

ՀՈԴՎԱԾ 32։—50–ից վոչ պակաս ընտրող ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից ստեղծվում են առանձին ընտրական տեղամասեր։

Մի քանի կորպուս ունեցող հիվանդանոցներում թույլ է տրվում կազմել ընտրական տեղամասեր առանձին կորպուսներում, յեթե նրանցից յուրաքանչյուրում կա առնվազն 50 ընտրող։

Այն հիվանդանոցներում և այլ բուժական հիմնարկություններում, ուր առանձին ընտրական տեղամասեր չեն կազմվում, թույլ է տրվում ընտրական բյուլետենները ընդունել հենց այդ հիվանդանոցներում ու բուժական հիմնարկություններում ընտրական հանձնաժողովների առանձնացված անդամների միջոցով։ Այդ դեպքերում հիվանդանոցներին տրվում են առանձին քվեատուփեր։

ՀՈԴՎԱԾ 33։—25–ից վոչ պակաս ընտրողներ ունեցող նավերը, որոնք ընտրությունների որերին կգտնվեն Հանապարհին, կարող են կազմել ընտրական առանձին տեղամասեր, որոնք մտնում են ընտրական ոկրուգի մեջ ըստ այն վայրի, որտեղ գրանցված է նավը։

ԳԼՈՒԽ V.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 34։—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ միաժամանակ հրապարակելով ընտրությունների որը։

ՀՈԴՎԱԾ 35։— Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 12 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 36։—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) Վրացական ԽՍՀ ամբողջ տերրիտորիայում հետևում է ընտրությունների ընթացքում «Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» անշեղ կատարմանը։

բ) քննում է ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների վերաբերյալ գանգատները և գանգատների նկատմամբ ընդունում է վերջնական վորոշումներ։

գ) սահմանում է կնիքների, ընտրական արկղների նմուշները, «քվեարկելու իրավունքի վկայականի» ձևը, ընտրական բյուլետենների և նրանց ծրարների ձևն ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, ձայները հաշվելու վերաբերյալ արձանագրությունների ձևը, ընտրվելու վերաբերյալ վկայականների ձևը։

դ) դրանցում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի համար ընտրված պատգամավորներին։

յե) Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի մանդատային հանձնաժողովներին է հանձնում ընտրությունների գործավարությունը։

ՀՈԴՎԱԾ 37։—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Ոկրուգային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 38։—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններին Ոկրուգային ընտրական հանձնաժողովները կազ-

մրվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, իսկ Արխազական ԽՍԻՀ, Աջարական ԽՍԻՀ և Հարավ-Օսեթյան ինքնավար մարզում՝ ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների և ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից, վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 39.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6 անդամներից:

ՀՈԴՎԱԾ 40.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը՝

ա) հսկում է աշխատավորների պատգամավորների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ընտրական տեղամասերը ժամանակին կազմակերպելու վրա.

բ) սահմանում է ընտրական տեղամասերի կարգահամարները.

գ) հսկում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու և ընդհանուրին ի տեղեկություն հայտնելու վրա.

դ) գրանցում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար Վրացական ԽՍՀ Սահմանադրության և «Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջների պահպանումով առաջադրված թեկնածուներին.

յե) Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում է սահմանված ձևի ընտրական բյուլետեններ և ծրարներ.

զ) հաշվում է ձայները և պարզում ընտրությունների հետևանքներն ոկրուգում.

է) Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ներկայացնում ընտրությունների գործավարությունը.

ը) ընտրված պատգամավորին տալիս է ընտրվելու մասին վկայական:

ՀՈԴՎԱԾ 41.—Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ շրջանային բաժանմունք ունեցող քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 40 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 42.— Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 2–6 անդամից:

ՀՈԴՎԱԾ 43.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական տեղամասում ընդունում է ընտրական բյուլետենները.

բ) հաշվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայները.

գ) ընտրությունների գործավարությունը հանձնում է Ոկրուգային ընտրական հանձնաժողովին:

ՀՈԴՎԱԾ 44.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Ոկրուգային և Տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը համարվում են վավերական, յեթե նրանց մասնակցում է հանձնաժողովների ընդհանուր կազմի կեսից ավելին:

ՀՈԴՎԱԾ 45.—Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը լուծվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը գերակշռում է:

ՀՈԴՎԱԾ 46.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կատարման հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին:

ՀՈԴՎԱԾ 47.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Ոկրուգային և Տեղամասային ընտրական հանձնաժողովներն ունեն իրենց կնիքը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած որինակի համաձայն:

ԳԼՈՒԽ VI.

ՎՐԱՑԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 48.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքով՝ Վրացական ԽՍՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի հիման վրա ապահովվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունները և ընկերությունները՝ կոմունիստական կուսակցական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, կոոպերատիվները, յերիտասարդության կազմակերպությունները, կուլտուրական ընկերությունները և այլ կազմակերպություններ, վորոնք գրանցված են որենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 49.—Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրականացնում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ինչպես կենտրոնական որգանները, նույնպես և նրանց հանրապետական, մարզային և շրջանային որգանները, ինչպես և բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ ձեռնարկություններում, կարմիրբանակայինների ընդհանուր ժողովները՝ զորամասերում, ինչպես և գյուղացիների ընդհանուր ժողովները՝ կոլտնտեսություններում, խորհտնտեսությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովները՝ խորհտնտեսություններում:

ՀՈԴՎԱԾ 50.—Պատգամավորության թեկնածուները չեն կարող լինել Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև այն ոկրուգի Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, վորտեղ նրանք առաջադրված են վորպես պատգամավորության թեկնածուներ:

ՀՈԴՎԱԾ 51.—Վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրող՝ աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները պարտավոր են պատգամավորության թեկնածուներին գրանցել Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովում:

ՀՈԴՎԱԾ 52.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են գրանցել Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն բոլոր թեկնածուներին, վորոնք առաջադրվել են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների կողմից, պահպանելով Վրացական ԽՍՀ Սահմանադրության և «Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» պահանջները:

ՀՈԴՎԱԾ 53.—Աշխատավորների հասարակական կազմակերպությունը կամ ընկերությունը, վորոնք Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածու յեն առաջադրում, պարտավոր են Ոկրուգային ընտրական հանձնաժողովին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա) պատգամավորության թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի արձանագրությունը, ստորագրված Նախագահության անդամների կողմից, վորի մեջ նշված է լինում նրանց տարիքը, բնակատեղը, թեկնածու առաջադրած կազմակերպության անունը, մատնանշված է լինում թեկնածու առաջադրած ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մասնակիցների թիվը, ըստ վորում՝ արձանագրության մեջ պետք է մատնանշված լինեն պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակատեղը, կուսակցականությունը, զբաղմունքը.

բ) պատգամավորության թեկնածուի հայտարարությունը, թե ինքը համաձայն է քվեարկվելու տվյալ ընտրական ոկրուգում իրեն առաջադրած կազմակերպության կողմից:

ՀՈԴՎԱԾ 54.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միմիայն մի ոկրուգում:

ՀՈԴՎԱԾ 55.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի հրաժարումը պատգամավորության թեկնածուին գրանցելուց կարելի է բողոքարկել 2 որվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է:

ՀՈԴՎԱԾ 56.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր գրանցված թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածուին առաջադրող հասարակական կազմակերպության անունը հրապարակում է Ոկրուգային ընտրական հանձնաժողովը վոչ ուշ, քան ընտրություններից 25 որ առաջ:

ՀՈԴՎԱԾ 57.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության բոլոր գրանցված թեկնածուները պարտավոր կերպով պետք է մտցվեն ընտրական բյուլետենի մեջ:

ՀՈԴՎԱԾ 58.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները պարտավոր են վոչ ուշ, քան Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպագրել և բոլոր Տեղամասային ընտրական հանձնաժողովներին ուղարկել ընտրական բյուլետենները:

ՀՈԴՎԱԾ 59.—Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական ոկրուգի ազգաբնակության լեզուներով:

ՀՈԴՎԱԾ 60.—Ընտրական բյուլետենները տպագրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և այնպիսի քանակությամբ, վոր ապահովվի ընտրական բյուլետենների մատակարարումը բոլոր ընտրողներին:

ՀՈԴՎԱԾ 61.—Յուրաքանչյուր կազմակերպության համար, վորն առաջադրել է Ոկրուգային ընտրական հանձնաժողովում գրանցված թեկնածու, ինչպես և Վրացական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու համար, իրավունք է ապահովվում անարգել ագիտացիա մղելու այդ թեկնածուի ոգտին ժողովներում, մամուլում և այլ յեղանակներով, համաձայն Վրացական ԽՍՀ Սահմանադրության 138-րդ հոդվածի:

ԳԼՈՒԽ VII.

ՔՎԵԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 62.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները կատարվում են մի որվա ընթացքում, վորն ընդհանուր է Վրացական ԽՍՀ համար:

ՀՈԴՎԱԾ 63.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների որը սահմանում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը վոչ ուշ, քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ: Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որ:

ՀՈԴՎԱԾ 64.—Ընտրություններին մնացած վերջին 20 որվա ընթացքում Տեղամասային ընտրական հանձնաժողովն ամեն որ հրապարակում կամ վորևէ այլ միջոցով ընտրողներին լայնորեն ծանուցում է ընտրությունների որվա և ընտրությունների տեղի մասին:

ՀՈԴՎԱԾ 65.—Ընտրողները ձայն են տալիս ընտրությունների որը տեղական ժամանակով առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը:

ՀՈԴՎԱԾ 66.—Ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ, ստուգում է քվեատուփերը և ընտրողների՝ սահմանված ձևով կազմված ցուցակի առկայությունը, վորից հետո փակում ու կնքում է քվեատուփերը հանձնաժողովի կնիքով և հրավիրում է ընտրողներին անցնել քվեարկության:

ՀՈԴՎԱԾ 67.—Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ, այդ նպատակով ներկայանալով քվեարկության համար հատկացված չենքը, ըստ վորում ընտրողներն իրենց ձայները տալիս են՝ ընտրական բյուլետենները փակ ծրարով քվեատուփի մեջ գցելով:

ՀՈԴՎԱԾ 68.—Ընտրությունների չենքում բյուլետեններ լրացնելու համար հատկացվում է հատուկ սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում է բացի քվեարկողներից վորևէ մեկի, այդ թվում և Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությունը. բյուլետենները լրացնելու համար մի քանի ընտրողների միաժամանակ ներս թողնելիս սենյակը պետք է ունենա միջնորմներ կամ շիրմաներ՝ միաժամանակ ներս թողնվող ընտրողների թվի համեմատ:

ՀՈԴՎԱԾ 69.—Ընտրական չենքը յեկած ընտրողը Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին ներկայացնում է անձնագիրը, կամ կոլտնտեսային գրքույկը, կամ արհմիութենական տոմսը, կամ անձնական վորևէ այլ վկայական

և ընտրողների ցուցակով ստուգվելուց և ընտրողների ցուցակում նշվելուց հետո ստանում է ընտրական բյուլետեն ու սահմանված ձևի ծրար։

ՀՈԴՎԱԾ 70։—Այն անձերի համար, վորոնք ընտրությունների չենքն են ներկայացել «քվեարկության իրավունքի վկայականով», համաձայն ներկա «Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրության» 16-րդ հոդվածի, Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է հատուկ ցուցակ, վորը կցվում է ընտրողների ցուցակին։

ՀՈԴՎԱԾ 71։—Ընտրական բյուլետենները լրացնելու համար հատկացված սենյակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուլետենում թողնում է այն թեկնածուի ազգանունը, վորին ձայն է տալիս ինքը, ջնջելով մյուսներինը։ բյուլետենը դնելով ծրարի մեջ ու փակցնելով ծրարը, ընտրողն անցնում է այն սենյակը, վորտեղ գտնվում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը, և ընտրական բյուլետեն պարունակող ծրարը գցում է քվեատուփի մեջ։

ՀՈԴՎԱԾ 72։—Այն ընտրողները, վորոնք անգրագիտության կամ վորևվե ֆիզիկական պակասության պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լրացնելու ընտրական բյուլետենը, իրավունք ունեն ընտրական բյուլետենների լրացման սենյակը հրավիրել մի վորևվե այլ ընտրողի՝ ընտրական բյուլետենը լրացնելու համար։

ՀՈԴՎԱԾ 73։—Ձայն տալու ժամանակ ընտրական չենքում ընտրական ագիտացիա չի թույլատրվում։

ՀՈԴՎԱԾ 74։—Ընտրական չենքի կարգապահության համար պատասխանատվություն և կրում հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները պարտադիր են բոլոր ներկա գտնվողների համար։

ՀՈԴՎԱԾ 75։—Ընտրությունների որվա գիշերը, ժամը 12-ին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայներ տալն ավարտված է հայտարարում, և հանձնաժողովն սկսում է բանալ քվեատուփերը։

ԳԼՈՒԽ VIII.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 76։—Այն չենքում, ուր Տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելու ժամանակ իրավունք ունեն ներկա գտնվելու աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների հատկապես դրա համար լիազորված ներկայացուցիչները, նույնպես և մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 77։—Տեղամասային ընտրական հանձնաժողովը, բացելով քվեատուփերը, համեմատում է տրված ծրարների թիվը քվեարկությանը մասնակցող անձանց թվի հետ և համեմատության արդյունքները մտցնում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 78։—Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը բացում է ծրարները և Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հրապարակում է քվեարկության արդյունքները՝ ըստ ամեն մի բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 79։—Պատգամավորության ամեն մի թեկնածուի համար յերկու որինակից հաշվեթերթ են կազմում հանձնաժողովի քարտուղարը և Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից այդ բանի համար լիազորված անդամները։

ՀՈԴՎԱԾ 80։—Անվավեր են համարվում այն բյուլետենները, վորոնք՝

ա) սահմանված ձևի և գույնի չեն։

բ) տրված են առանց ծրարի կամ վոչ սահմանված ձևի ծրարով։

գ) ունեն ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 81։—Ընտրական բյուլետենի վավերականության վերաբերմամբ կասկած ծագելու դեպքում հարցը լուծում է Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության միջոցով, վորը և նշվում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 82։—Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արձանագրությունը կազմում է սահմանված ձևով յերկու որինակից, վորոնք ստորագրվում են Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների, այդ թվում՝ ան-

ՀՍՍՀ-ՍՍՀ
Մ. Ա. Մաշտոցի անվ.

պայման նախագահի ու քարտուղարի կողմից։

ՀՈԴՎԱԾ 83.—Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է մատնանշվի.

ա) քվեարկումն սկսելու և ավարտելու ժամանակը.

բ) ընտրողների ցուցակի համաձայն, ձայն տված ընտրողների թիվը.

գ) այն ընտրողների թիվը, վորոնք ձայն են տվել «քվեարկելու իրավունքի վկայականներով».

դ) տրված ծրարների թիվը.

յե) այն հայտարարությունների ու գանգատների համառոտ շարադրումը, վորոնք տրված են Տեղամասային ընտրական հանձնաժողովին, և Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

զ) ձայները հաշվելու արդյունքներն ըստ ամեն մի թեկնածության։

ՀՈԴՎԱԾ 84.—Ձայները հաշվելը և արձանագրությունը կազմելն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

ՀՈԴՎԱԾ 85.—Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության արձանագրության մի որինակը, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների յերկու որինակի հետ միասին, սուրհանդակի միջոցով, 24 ժամվա ընթացքում ուղարկվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 86.—Ընտրական բոլոր բյուլետենները (վավերական ճանաչվածներն առանձին և անվավեր ճանաչվածներն առանձին) պետք է կնքվեն Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեարկության արձանագրության յերկրորդ որինակի և կնիքի հետ միասին, Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ձեռքով պետք է հանձնվեն պահելու՝ քաղաքներում—աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներին, իսկ շրջանային բաժանումնք ունեցող քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդներին, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 87.—Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վրա պարտք է դրվում պահել ընտրական բյուլետենները մինչև Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի համապատասխան ոկրուգի պատգամավորների մանդատի հաստատումը։

ՀՈԴՎԱԾ 88.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները Տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 89.—Այն չենքում, ուր Ոկրուգային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելու ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, նույնպես և մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 90.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կազմում է յերկու որինակ հաշվեթերթիկ, վորի մեջ նշվում է պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների քանակը։

ՀՈԴՎԱԾ 91.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկության արձանագրությունը յերկու որինակ, վորը ստորագրում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ նախագահը և քարտուղարն անպայման։

ՀՈԴՎԱԾ 92.—Ոկրուգային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի.

ա) ոկրուգի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար տրված ձայների թիվը.

դ) Ոկրուգային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների համառոտ շարադրումը և Ոկրուգային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 93.—Վոչ ուշ, քան ձայների հաշվումն ավարտելուց 24 ժամ հետո, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է արձանագրության առաջին որինակը, կցված

հաշվեթերթերով, կնքված, սուրհանդակի միջոցով ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

ՀՈԴՎԱԾ 94.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն թեկնածուն, վորը ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ ոկրուգում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված:

ՀՈԴՎԱԾ 95.—Արձանագրությունը ստորագրելուց հետո, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրությունների արդյունքները և ընտրված լինելու վկայական է տալիս Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար ընտրված թեկնածուին:

ՀՈԴՎԱԾ 96.—Եթե թեկնածուներից վոչ մեկը ձայների բացարձակ մեծամասնություն չի ստացել, համապատասխան Ոկրուգային ընտրական հանձնաժողովն այդ մասին առանձնապես նշում է արձանագրության մեջ և հաղորդում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և միաժամանակ հայտարարում է ձայների ամենամեծ քանակությունն ստացած յերկու թեկնածուների վերաքվեարկում, նույնպես և նշանակում է վերաքվեարկման որը վոչ ուշ, քան ընտրությունների առաջին շրջանը լրանալուց յերկու շաբաթ հետո:

ՀՈԴՎԱԾ 97.—Եթե ոկրուգում տրված ձայների քանակն այդ շրջանում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից քիչ է, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Ոկրուգային ընտրական հանձնաժողովը նշում է այդ մասին առանձնապես արձանագրության մեջ և անհապաղ հայտնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ընդ վորում այդ դեպքում Կենտրոնական ընտրական հանձաժողովը նշանակում է նոր ընտրություններ վոչ ուշ, քան առաջին ընտրություններից յերկու շաբաթ հետո:

ՀՈԴՎԱԾ 98.—Պատգամավորության թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես և անվավեր ճանաչված ընտրությունների փոխարեն նոր ընտրությունները կատարվում են ընտրողների՝ առաջին ընտրությունների համար կազմված ցուցակներով և լիովին համապատասխան՝ ներկա «Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությանը»:

ՀՈԴՎԱԾ 99.—Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալու դեպքում Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը յերկու շաբաթվա ժամկետում համապատասխան ընտրական ոկրուգում նոր պատգամավորի ընտրությունների ժամկետ է նշանակում, բայց վոչ ուշ, քան Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալուց յերկու ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 100.—Ամեն վոք, ով բռնության, խաբեբայության, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով կխանգարի Վրացական ԽՍՀ քաղաքացուն իրագործելու Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի համար ընտրելու և ընտրվելու նրա իրավունքը,—պատժվում է ազատազրկումով մինչև յերկու տարի ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 101.—Խորհրդի պաշտոնատար անձնավորությունը կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կեղծել է ընտրական փաստաթղթերը, կամ դիտավորյալ կերպով ճիշտ չի հաշվել ձայները, պատժվում է ազատազրկումով մինչև յերեք տարի ժամկետով:

Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղարի պաշտոնակատար՝ Վ. ԲՈՒԶԻԱՇՎԻԼԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Գլուխ I — Ընտրական սիստեմը 3
Գլուխ II — Ընտրողների ցուցակները 4
Գլուխ III — Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ընտրական ոկրուգները 6
Գլուխ IV — Ընտրական տեղամասերը 7
Գլուխ V — Ընտրական հանձնաժողովները 9
Գլուխ VI — Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրելու կարգը 12
Գլուխ VII — Քվեարկման կարգը 14
Գլուխ VIII — Ընտրությունների արդյունքների վերջոշումը 17

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Դասպարյան
Տեխ. խմբագիր և թողարկիչ՝ Ս. Դովլաթյան

Հանձնված է արտադրության 8/III 1938 թ.
Ստորագրված է տպագրության 11/III 1938 թ.
Պատվեր № 1043
Տիրաժ 25·000, թղթի չափը 62X94
Դրքի չափը 6X10, գրքի ծավալը 1½ տպ. մամուլ
Գլավլիտի լիազոր № 15113

ՀՍՍՀ-ՍՍՌ Գ.Ա. Մասիսյանի անվան գրադարան

Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի «ԶԱՐՅԱ ՎՈՍՏՈԿԱ» հրատարակչ.
Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան կարմրադրոշ տպարան — Թբիլիսի
Ռուսթավելի պող. № 36.

ՀՀ Ազգային գրադարան
NL0200704

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ ГРУЗИНСКОЙ ССР

(На армянском яз.)

Издательство ЦК КП(б) Грузии „Комунисти"
Тбилиси – 1938